ԱՐԱՐԱՏ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԻՍԱՄՄԵԱՅ

ԸՕՉԻՔՅԱՆ ԸՒՒՈՂՋՈՒԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԱՆ

Բ· ՏԱՐԻ· Թիւ 8· 1862 ԱՊՐԻԼ 15·

ՁՕՆ

ԱՌ ԱՋՆՈՒԱՓԱՅԼ ՍԱՐԳԻՍ ԷՖԷՆՏԻ ՊԱԼԵԱՆ

ԻՇՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ՄԵՓԵՆԱՊԱՆ ՀՐԱՇԱՐՈՒԵՍՏ ԳԻՒՏՈՅՆ

Որ ՚ի հանդէս զվէհ ծնունդ հանճարոյդ
Եգեր յԱսեան հրաշարուեստն Եւրոպայ ,
Ու անահ չըքեղածաւ պըսակ զճակատուդ՝
Ընդ պերճ փառաց և՛ ս պարծանաց մշտահակ ։

Յաւելեր Տէր , ՚ի հրաշալիս Եւրոպայ ,
Եւ ընդ նմին՝ փառս Քո Աղդիդ եւ Թուրքիայ .
Տեսին զայս՝ Տէր , և՛ Թուրքիա ։ և՛ Քո Աղդ ,
Եւ ծափս հարին ընդ Քո այս գիւտ փառունակ ։

Զեղան չրմունք ՚ի գովս ըղձին վէհդ Պալեան ,
Անհագուելիս ընդ անհագ Գիւտդ հրաշագան .
Զփառսի Անուանդ ո՛չ ժանդ ժամուց , եւ ոչինչ
Ծախեսցեն Տէր ։ — Ս յոպէս Երկին աղդէ ինձ ։

28 Յուլիս 1862 ։
Ի ԲԵՐԱ·

ՀԱՄԲԱՐՁՈՒԻՄ Ս· ԱԼԱՃԱՃԵԱՆ

ԱՐՔՈՒՆԻ ՁԱՐՏԱՐԱՊԵՏ

ՊԱԼԵԱՆ ՍԱՐԳԻՍ ԷՖԷՆՏԻ

Հայոց Ազգին կատարելութիւններն մէկն ալ, ամէն տեսակ գիտութեանց և արհեստից խիստ յարմարութիւն ունենալն է որով և սիրելի ու պատուաւոր եղած է բոլոր օտար Ազգաց առջև։ Պատմութիւնն ալ օրինակներով կվկայէ այս ճշմարտութիւնը, ինչպէս Աբշաղունեաց ատեն վաղարշակ և ասոր նմաններն։ Վաղարշակ յիրաւի արժանի է անմահ յիշատակաց և սիրելի Ազգիս։ Երևելի էր նա իր ուսումնասիրութեամբը, որ նոր շատ աշխատեցաւ իր Հայրենիքը յառաջ տանելու։

Ազգիս մէջ կգտնուին յիրաւի այնպիսիներ որոնք իրենց Ազգին փառք ու պարծանք են։ Ընտեցած ենք ի վաղուց ունակ երևելի անձինք, արհեստի, գիտութեան, գրականութեան, վաճառականութեան, օրինադրութեան կողմանէ, բսածիս օրինակներ կրնայ գտնալ հետազրգիռ ընթերցողը Ազգային պատմութեան մէջ։ Իսկ այս նոր տարիներուս մէջ նոյնպէս երևելի են զրօրինակ ճարտարապետութեան կողմանէ Աբքունի ձարտարապետ Պալեան Նիկողոս Աղային, որուն մահուանը վրայ դեռ մինչև այսօր Հայը, մանաւանդ պանդուխտ Հայը կողբայ։ Վերոյիշեալ Ազգասէրը ձարտարապետին հանճարոյն վկայ է Տօլմա-Պահճէի Աբքունի պալատն և ասոր նման ուրիշ շէնքերն։ Նմանապէս և նկարչութեան կողմանէ Ռուսիոյ Թագաւորին նկարիչը Այվազովսքին։ Դրականութեան կողմանէ Մխիթարեանց Միաբանութեան մեծագոյն մասը։ Նոյնպես վաճառականութեան կողմանէ ալ Հայոց Ազգը մեծ համբաւ ստացած է, զի ամէն Հայաբնակ տեղ բազում վաճառականներ կան, ինչպէս Տաճկաստան, Եւրոպայ, Ռուսաստան և մինչև Հնդկաստան։

Եւ ահա այս վերջին օրերուս մէջ Հայը նոր փառք մ' ալ ունեցաւ, որով Եւրոպիոյ լուսաւորեալ աղգաց առջև աւելի պատուաւոր և սիրելի ըլլալն շատ հաստատեց, որ Հայը ամէն տեսակ գիտութեանց և արհեստից խիստ զարմանալի յարմարութիւն մ'ունի։

Անդղիոյ Սբուեստահանդկան Հայոց Ազգին մէկ պարծանքն ալ աւելցնելու առիթ եղաւ և բոլոր Աշխարհիս հրաւիրեց որ Հայը յառաջադիմութեան խիստ յարմար է։

Եւ ահա ուրախութեամբ սրտի կըլլինք մենք ալ Աբքունի ձարտարապետ Պալեան Սարգիս Էֆէնտիին մեքենական նոր գիւտը, և կաւելցնենք ըսելով որ նա ևս երևելի եղև մեքենադործութեան կողմանէ։ Այս մասին իր Անունը ոչ միայն ազգային, այլ օտար Ազգաց Պատմութեանց մէջ պիտի անմահանայ։ Պալեան Սարգիս Էֆէնտին փառք եղև իր Հայրենեացը, պարծանք Օսմանեան Տերութեան, պատիւ Ընտանեացն ու օգտակար բոլոր մարդկութեան։

Սարգիս Էֆէնտիին գովութեան արժանի այս մեծ գործը մէկ կողմէն Ազգային և օտար Ազգաց գրութ է ամէն Լրագրոց մէջ հրատարակուելուն աւելի մանաւանդ տեղեկութիւններ տալն աւելորդ համարելով, միս կողմանէ ալ վերոյիշեալ ստանաւոր ձօնը, բարեբախտաբար մեր ձեռքն անցնելով հանդիսիս միջոցաւ միայն զանի հրատարակենք պարտք համարեցայ, որպէս Բնարեկեան Վարժարանի Հայկաբանութեան դասատու Պ. Է. Ս. Աբաճանի ազգասիրական և երախտապարտ ոգին կ'յայտնէ։

ԸՆՈՂՋԱԿԱՆ

ԱՆԱՍՆՈՑ

ԿՆՆԱՑ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆԸ

Ցնկոց* կենաց տևողութեանը վերջ արգէն իսօսած ատեններս խօստացած էինք, անատնական գասին այս երկրորդ կարգին վրայ ալ մանաւորապէս պէտք եղածն յառաջ բերել, որ նոր կենդանական այն մեծ գասուն ամենէն կատարեալ մասն կկազմէ։ Անատնոց տեսակը անհամար է։ Հետևաբար նոցա ամեն մէկ տեսակին կենաց տևողութեանը մէջ ահռելի տարբերութիւններ կան, բայց և այնպէս անատունք ոչ միայն այս կէտիս մէջ կտարբերին, այլ և կատարելագործութեան կողմանէ։ Ձիրաւի քան և չորս ժամ ապրող որթէն մինչև երկու հարիւր տարի ապրող փիղը և տանց նման անհամար անատնոց կենաց տևողութեան մէջ եղած տարբերութիւնները մեծ և անտրամաբան են։ Առաջինը տրդալև մէկ օրուան մէջ կծնի, կմեծնայ, կծերանայ և վերջապէս կմեռնի, ուր անդին մի և նոյն վիճակները անցնելու համար 10, 20, 100 և մինչև 200 տարի պէտք է։ Այս ընդարձակ նրբութիս վրայ պէտք եղած տեղեկութիւններն սակաւով, ուրիշ մէկ կարևոր խնդրոյ մը մեկնութիւն ալ տալու պիտի կարողանանք, այսինքն թէ ո՞ւսկից կախումն ունի կենդանոց տևողութիւնը։

Նախ եկսիմք յառաջ բերել պատճէրն, որոնք անատնոց աճեցնէն յետին կամ տարրին կարգն կկազմեն և հետևաբար աւելի բուսական գասին կվերաբերին։ Այս կարգ անատնոց մարմինը թոռլ և փափուկ ըլլալուն, շուտով կքայքայուի փճանալ ու ոչնչանալ, բայց և այսպէս անկոց նման սա յատկութիւնն ալ ունին որ, այս տեսակ անատուն մը եթէ մինչև անգամ մէկ քանի կտորի ալ բաժնուի, դարձեալ այն ամեն մէկ կտորը մանաւորապէս կապրի և նոր անատուն մը յառաջ կբերէ, անանկ որ այս տեսակ անատնոց կենաց տևողութեան սահմանն որոշել շատ դժուար և երբեմն ալ անկարելի է։

Այս տեսակին մէջ այսպիսիներ ալ կան, որ կարծես թէ անեղծ և չընչացող են, որոնց վրայ հետագրգռութենէ շարժեալ երևելին Ֆօնթանա և կէզ զարմանելի և բազմաթիւ հետազօրութիւններ ըրած են։ Ֆօնթանա ասոնցմէ արևելեան ծաստիկ տատութեան տակ կամ փուռի մէջ չորցուցած է և վեց ամիսէ ետքը, քիչ տաք ջրի մէջ դնելով զանոնք բոլորովին որթնցուցած է։

Ահա այս օրինակը մեր նախագիծ երևելուն մէջ "հետազօրութիւնք ի վերայ կենսական զօրութեան և ի վերայ սահմանի կենաց" վերնագրով յօդուածնուս մէջ յառաջ բերած սա հետևեալ կէտը կհաստատէ թէ "անատուն մը որքան անկատար ըլլայ, այնքան աւելի կտարի։

Բայց աւելի կատարեալ կազմուածք ունեցող որթերն առաջիններուն նման այն զարմանալի յատկութիւնը չունենալուն համար, բնութիւնը անոնց կենաց տևողութիւնը աւելցնելու դիտմամբ ուրիշ միջոցներ ստեղծած է, այսինքն այս վերջի տեսակին կենաց սահմանը զանազան փոփոխութեանց ենթակայ ընելով։ Զօրօրինակ դէլաւը երկու, երբեք կամ չորս տարի ներքնոյն կերպարանքով ապրելէն ետքը, որթային պատեանի մը մէջ կփակուի, և այս տո երեսս մեռեալ վիճակի մէջ ալ

---

* Տես թիւ 7 երես 79։

բաւական ժամանակ ապրելէն զկնի , իր տեսակին յարմար կազմուածքին կատարելութիւնն ստանալով այն պատեհանէն դուրս կելլէ , և ահա այն ատենն է որ կոնենայ Թև ու ծնանելու յատկութիւն : Բայց և այնպէս այս վիճակը , որն որ տնկոց ծաղիկ բանալու ժամանակին հետ ճիշդ կրնամք բաղդատել , շատ համառօտ է , և վերջապէս կմեռնի իր պարտքն կատարած ըլլալով :

Ահա այս օրինակէն կրնամք հասկընալ Թէ ո՛րչափ անկատար է միջատին կեանքը առաջին օրերուն մէջ , այսինքն Թրթուր եղած ատենը , շատ տկար , ծնանելու անկարող , միայն ուտելու և մսրսելու համար կապրի , անանկ որ 24 ժամու մէջ իր երեքպատիկ , քառապատիկ ծանրութիւնը ունեցող ուտիճներ կկլլէ : Վերջապէս առած մնունդին նայելով մարմնոյն ըրած ապառումը խիստ քիչ ըլլալուն , զարմանալի չէ ուրեմն , երբ այս տեսակ անասուն մը իր պզտիկութեանը և անկատարելութեանը նայելով խիստ շատ կապրի : Նոյնպէս պատեհանին մէջ փակուած ժամանակը : Եւ որչափ որ այս դադարական վիճակին մէջ առանց որ և իցէ մնունդ մ' առնելու կրնայ ապրիլ ալ նէ , զարձեալ զարմանալի չէ , զի ոչ արտաքին պատճառ մը որ և իցէ կորուստ կամ ըսպառում չունի : Ասկ կենաց վերջին ահմանին հասնելով , երբ իր տեսակին համեմատ կազմուածքի կատարելութեան վիճակն կստանայ և օդին մէջ ապրելու յատկութիւն կվաստկի , և ահա այն ատեն միայն շարժման և ծնանելու ծառայելով , շարունակ նեթքին սպառման ենթակայ կըլլայ , անանկ որ մնունդը և մարմնոյն սպառումը իրար չհաւասարակշռելով , հետևաբար օր ըստ օրէ տկարանալով , կենաց վախճան տալու մեծ պատճառ կունենայ :

Ուստի փորձն և հետազօտութիւնք մեզի կսովրեցնեն որ այս տեսակ անասունն մը երբ իր կատարելութեան վիճակն ստանայ , կմեռնի ու կընչնայ ասկից ի զատ կսովրինքնաև որ այս դաս անասնոց մէջ մի և նոյն անասունը զանազան փոփոխութեանց ենթակայ կըլլայ , կազմուածքի տարբեր կատարելութիւններ կունենայ , միանգամայն տարբերելով կենաց տևողութիւնը այն զանազան վիճակներուն մէջ և վերջապէս կենսական զօրութիւնը կըսպառի երբ անասունը կազմուածքին կատարելութեան վիճակն կստանայ :

Սղոտ կոչուած անասնոց դասին , այս պզտիկ և երկակենդան անասնոց կեանց տևողութիւնը բաւական երկարատև է : Այսոց այսչափ երկայն ապրելու յատկութիւնն իրենց խիստ պնտութենէն յառաջ կուգայ և հետևաբար նոցա կենաց անզօրութենէն :

Շատ անգամ գլուխնին կտրած կրնայ ներս ապրիլ , նոյնպէս և սիրտերնին հանուած զորտերուն ցատկելնին տեսանուած է , որմով կապացուցանի Թէ ո՛րքան անզօր է այս տեսակ անասնոց կեանքը և հետևաբար ո՛րքան ուժով նոցա նորոգութեան պիտոյքը : Բարերու և մարմրիոնի կտորներու մէջ վինչև անգամ ապրող արջնագորտեր տեսնուած է , և ասոնք ձուկն էլլելէն առաջ կամ ետքը մտած ալ ըլլան , զարձեալ զարմանալի և անընդունելի են , եթէ աչք չէնին վկայ : Որովհետև* միտքդ բեր մէկ անգամ Թէ ո՛րքան տարիներու կարօտ է մարմարիոնի կտորի մը այնչափ մեծ նալն ու կարծրանալն :

Այս տեսակ անասնոց , վերտինոց զօրութիւնը մեծ ազդեցութիւն

* Այս տեսակ զարմանալի օրինակ մը վեց առաջ Եւրոպիոյ Լրագրոց մէջ կարդացուած է :

ունի կենաց տևողութեանը վրայ : Այս գործողութիւնը հազար ու մէկ վտանգներու դէմ կառնէ և զարձեալ սոյն գործողութեամբ , այսինքն սոյն նորոգիչ զօրութեամբն է որ այս տեսակ անասունի մը կորուսեալ մէկ մասը շուտով կնորոգի , ինչպէս գլուխն , ոտքերն , ձեռունները և : Նոյնպէս են նաև կրխտանեքան մեծ մասին խոշխից փոփոխութիւնը . նոյն օրէնքով ձերն , գորտերն , մողեզներն ամէն տարի իրենց մորթը կփոխեն : Այս այս տեսակ վերաբերի տասնորդականն , իրենց գոյութիւնը երկարելու և պահպանելու մեծապէս կօգնէ :

Այս տեսակ նորոգում մը գրեթէ ամէն տեսակ անասնոց մէջ կտեսնուի : Ինչպէս որթերուն մինչև մեծնելու առենին կազմուածքի և մարմնոյն ձևին կողմանէ ունեցած զանազան փոփոխութիւնները , թռչնոց փետրափոխութիւնը և կանթնաբեր անասնոց շատերուն որոշ և հաստատ ժամանակներու մէջ իրենց մազերնուն գոյնը փոխուիլն :

Տղուն կոչուած այս դաս անասնոց մէջէն ամենէն երկայնակեացներն են կրայն ու կոկորդիլոսն : Կարելի է որ Կենդանաբանութիւն կոչուած գիտութեան օր ըստ օրէ յառաջադիմութիւնը առնցմէ զատ , և աւելի երկայնակեաց ուրիշ անասուններ ալ գտնէ :

Կրայն , ծոյլ , մողաստ և սակաւարիւն անասունը , շատ ուշ կմեծնայ , զի հազիւ թէ քսան տարուան մէջ երկու մատնաչափ երկննայ , բայց և այնպէս հարիւր տարիէն աւելի կապրի :

Կոկորդիլոսն , մեծ , հսկայ և աշխոյժ անասունը , որուն բոլոր մարմինը ամենասերտ մորթով մը զրահաւորեալ է , կարգէ դուրս շատակեր և միանգամայն նոյնչափ դիւրութեամբ մարսելու զօրութիւն ունի և շատ տարիներ կապրի : Եթէ երևելի բնագիտաց և ճանապարհորդաց ըստծն ճշմարիտ է , այն է միակ անասունը , որն որ իր բոլոր կենացը մէջ կաճի ու կմեծնայ :

Զուկի տեսակէն ոմանք ևս շատ երկան կապրին և կարելի է որ , ըստ քնագիտաց , անասնոց դասէն միայն անոնք աւելին աւելի երկայնակեաց են , իրենց մարմնոյն մեծութեանը նայելով : Հռովմայեցւոց պատմութիւնը մեզ կըսովրեցնէ որ իրենց ձկնատեսանութեան մէջ մինչև 60 տարի ապրող Դ-ԷՆԵՆ (մորինա պալըզը) տեսնուած է , որոնք մինչև անգամ մարդոց հետ այն աստիճան ընտանացած էին , որոնցմէ մէկուն մահուան լուրը մեծն Թարտասիոս Քառսուսը լացուց :

Գայլաձուկն (Ռո-քինա պալըզը) շատակեր , և Ծածանը (սալման պալըզը) նախնեաց վկայութեանը նայելով մինչև Հարիւր յիսուն տարի կապրին : Կարմրամիսը (սալմոն պալըզը) իրաւ է որ շուտ կմեծնայ , և բայց և այնպէս շուտ ալ կմեռնի : Կան այնպիսիներ ալ , զոր օրինակ անուշ ջրի մէջ ապրողներէն ոմանք , որքան որ շատ ուշ կմեծնանին ալ , այնքան աւելի երկայնակեաց են :

Զկանց վրայ այս Համառօտ ծանօթութիւնը տալէն վերջը սա հետևեալ խորհրդածութիւնն յառաջ բերել յարմար կդատեմ , այսինքն թէ այս դաս անասնոց մէջ բնական մահը աւելի սակաւ է : Որովհետև կարծես թէ տունց մէջ շարունակ մէկզմէկու մարմին մտնելու օրէնք մի կայ , տկարն զօրեղին , վանդալ մէկզմէկ կկլլեն , տկարներն ուժովներու կերակուր կըլլան և աստանկով ջրին մէջ շատ քիչ անգամ տունց գիշը կտեսնուի : Կարծես թէ երկրիս վրայ հասարակաց վճռին եղող մահը շատ քիչ է , վանդալ մեռելը անմիջապես կենդանիին կկըլլուի : Հոտելու գործողութիւնը կեն-

պանեայ ստամնքսին մէջ կկատարի , և այս ալ վերին Նախախնամութեան անհուն իմաստութիւնն կ՚յայտնէ , որով հետև եթէ ջրին մէջ այս միլիոնաւոր քնակիչներէն ամեն օր մեռնողները 24 ժամ առանց թաղման մնային և կամ չկլլուէին իրենց նմաններէն , անմիջապէս հոտելով , վնասակար և զանազան յառալի հիւանդութեանց ծնունդ տուող կազ և հոսումն յառաջ պիտի գային : Եւ ջուրը որ անասնական մարմնոց հոտելէն յառաջեկած գէշութիւնները ոչնչացընելու այնքան հզօր յատկութիւն չունենալով , պէտք պիտի ըլլար այն ատենը կամ բոլոր այս գէշութիւնները ոչնչացընելու միջոցներ ստեղծել կամ մինակ կեանքն չարունակ տևել պէտք էր , այս ինքն ձուկ կոչուած անասնոց մէջէն և ոչ մէկն մեռնելու էր , որնոր անկարելի էր , է , և պիտի ըլլայ :

Թռչնոց մէջ ալ շատ երկայնակեաց տեսակներ կան : Ահա ասոնց կենաց երկարատևութեան գլխաւոր պարագայները :

Ա . Որովհետև այս անասուններուն մարմինը շատ աղէկ գոյացած է , որով հետև տաքութիւնը պահող ամեն տեսակ հագուստէ աղէկ է , փետուրը :

Բ . Որովհետև ամեն տարի կերպով մը կերիտասարդանան փետրափոխական յատկութեամբ : Թռչունը , փետրափոխութեան ժամանակ քիչ մը կհիւանդանայ , յետոյ փետուրները կթափին , ուսկից նորերն կծնին :

Գ . Որովհետև ամեն տեսակ անասնոց մէջէն միայն ասոնք են որ մաքուր օդ կծծեն կամ կշնչեն , և միանգամայն թռչունք են միայն որ շատ կշնչեն , զի օդը ոչ միայն անոնց թոքերուն կամ կուրծքին մէջ կմտնէ , այլ և ոսկորներուն :

Դ . Որովհետև շատ կչարժին և ահա ասոնց չարժումներն են միայն՝ առողջապար և օգտակար , միայնդամայն ներգործական ու կրաւորական ըլլալնուն . ասոնք միայն յառաջ երթալու համար կչարժին , զի իրենք բարձրութեան մէջ կեցնողն է օդը : Թռչնոց այս տեսակ չարժումը , լողալու կնմանի , որոնք մարմնամարզութեան վերաբերեալ ամեն տեսակ կրկնութիւններն գերազանցեն :

Ե . Այս տեսակ անասնոց միզը , մասնաւոր յատկութեամբ մը իրեն չհետ մկտեղ դուրս կհանեն նաև մանր ինոյմէջ հողային և հանդային նիւթերը . ասանկով միւս դաս անասնոց մէջ եղած մարմինը չորցնող , ժամանակէն առաջ ծերացնող և մեռցնող ամենագլխաւոր պատճառներուն մէկը պակսած կըլլայ :

Թագաւորական արծիւը , մեծ ու հզօր թռչունը , շատ երկայնակեաց է . շատ անգամ հարիւր տարիէն աւելի կապրի : Նոյնպէս են անգղը (ափպապա) և բազէնը (չաֆին) որոնց երկուքն ալ յափշտակիչ թռչուններ են : Մէկ քանի տարի առաջ , Լօնտրայի մէջ , Պ . Սեքուէնտը , Բարեյուսոյ նեղուցին կողմը ծակին օձակ անցուցած բազէն մը ընդունեցաւ , որուն վրայ սա հետևեալ խօսքերն նշանակուած էին Ափղլարէն լեզուաւ , սա՝ Նորին կայսրութեան ժա՛ , Ափղէոյ թագաւոր , տարի 1810 : 182 տարին անցած էր այս հնակայ թռչունին գերութիւնը :

Աղեօք քանի՛ տարուց էր քննուած ժամանակն , ասիկայ որոշելն անկարելի էր : Սակայն և այնպէս գեռ բաւական ուժ և առոյգութիւն ունէր , միայն աչուներն քիչ մը տկարացած և կոկորդի փետուրներն ճերմկցած էին :

Աղռաւ (գարկա) մնակեր թռչունը , որուն միսը կարծր և սեւ է , մինչև հարիւր տարի կապրի : Նոյնպէս է և պորը , քուսակեր թռչունը , որ շատ կը սիրէ վաղուց ջուրը :

Նոյնպէս պապակին (վրափաղան

պերութեան մէջ իւրաքէն մինչև 60 տարի ապրիլն տեսնուած է, առանց գիտնալու Թէ քանուած առնն քանի տարեկան էր։ Այս Թռչունը ամեն կողմէ կմախս, միսը կարծր և մեծ պոյտ է։ Սիրամարգը մինչև 20 տարի կապրի, Բայց սքաղաղը, որ աչխոյժ բարկասիրտ և անառակ անասուն մի է, առաջինէն շատ քիչ կապրի։ Ճնճղուկը, որ աքաղաղէն առելի ցանկասէր է, ոչ միայն անկից շատ պակաս կապրի, այլ ընդհանրապես ամեն փոքր Թռչուններէն քան ի կերնիկակ (գորտնուկ) և եկեղանիկ (սոգակռնուկ) որոնք մինչև 20 տարի կապրին։

Այնմինչ ըստ կարգի Տեսանելոյ առելի կատարելութիւն ունեցող անասնոց դասը, կամ նաբեր դասը, որոնք առելի կմտերնան մարդոց. դարձեալ առնոց մէջ ալ մեծ տարբերութիւն մի տի գտնենք կենաց տևողութեան մէջ։ Այսոնց մէջէն առենէն շատ ապրողն է փիղը, ասոր հասակին մեծութիւնը, աճման ծանրութիւնը, մորթին և ակռաներուն կարծրութիւնը կ՚ապացուցանեն, որ անասնոց մէջէն միայն այս է որ այսքան տարի ապրելու իրաւունքն ունի։ Երևելի կենդանաբանից և բնագիտաց փորձերն կհաստատեն Թէ այս հսկայ անասունը մինչև երկու հարիւր տարի կրնայ ապրիլ։

Առիւծին մինչև քանի տարի ապրելն մինչև այսօր բացարձակապէս որոշուած չէ, բայց և այնպէս կրնայ ենթադրուիլ որ այս ալ երկայնակեաց է, զի շատ անգամ քանուած առիւծներն առանց ակռայի են։

Այսոցմէ հետը կուգայ արջը, սակաւարիւն, դանդաղ ու ծոյլ անասունը, որ առաջիններուն չափ չապրիր, Թշուառ անոնց, որոնք կարծեն Թէ ծուլութեան մէջ երկայնակեցութեան պատճառքն գտած են։

Ընդհակառակն ուղտը, նիհար, չոր, գործունեայ և չհոգնող անասունը, շատ կապրի, ընդհանրապես 50 և երբեմն ալ մինչև հարիւր տարի։

Ձիը, առենէն շատը, քառասուն տարի կապրի, այս ալ մեծ և ուժեղ, բայց սակաւակեցութիւն անասուն մի է։ Շատ զգայուն ըլլալուն, հիւանդանալու ալ մեծ դիւրութիւն ունի։ Սակայն կարելի է որ իր կենաց տևողութիւնը կարճատող պատճառներն մարդոց մէջ առեն անցնելնուն համար ըլլայ, որովհետև մինչև այսօր չէ գտուած Թէ վայրենի վիճակին մէջ մինչև քանի՞ տարի կրնան ապրիլ։

Նոյնպէս է հէշը։ Այս երկուքին այսինքն ձիուն և իշուն զուգաւորութենէ յառաջ եկածը կամ ջորին, ասոնց մէջ առելի կապրի։ Եղջերուներուն կենաց տևողութեանը վրայ նախնեաց աւանդածը վիպասանական է, զի առնք մինչև 30 տարի հազիւ կապրին, բայց և այնպէս կարգէ դուրս օրինակներ ալ տեսնուած է, ինչպէս առջն բանի մէջ։

Յուշն ալ որ շատ ուժով և երկայնահասակ է, ընդհակառակն մինչև 15 կամ 18 շատը քսան տարի կապրի։

Փոքր չորքոտանիներուն շատերն ինչպէս խոյը, այծը, աղուէսը, նապաստակը, հազիւ 7—8 տարի կապրին, բայց ի շունէն և խոզէն որոնք մինչև քսան տարի կրնան ապրիլ։

Շարունակելի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Խօսակցութիւն Ա.

1. Բնական պիտութեան նպատակն ի՞նչ է։

— . Բնական գիտութիւնը (ՓԻԶԻ*) կը սովրեցնէ մարմնոյ ընդհանուր յատկութիւնները, ինչպէս գոյն, առաձգականութիւն, թափանցելութիւն, եւ.

2. Եւ ինչո՞ւ համար քիմիաբանութեան (ՔԻՄԻ) կտակը պէտք է.

— . Որովհետեւ քիմիան մարմնոյ բնութիւնը եւ բաղադրութեանց օրէնքները կսովրեցնէ: Բնական գիտութիւնը կսովրեցնէ թէ ջուրն է հեղուկ մարմին մը հարիւր աստիճանի տաքութեամբ կը շոգիանայ եւ զրօէն չորս աստիճան վար կսառի: Իսկ քիմիան կսովրեցնէ թէ ջուրը երկու տեսակ կազերէ բաղադրեալ է, ինչպես են թթուածինը ու ջրածինը:

3. Ի՞նչ է անդամազննութիւնը (ԱՆԱՏՈՄԻ).

— . Անդամազննութիւն ըսելով պիտի հասկնանք այն գիտութիւնը, որ կը սովրեցնէ անասունի մը կազմուածքը եւ զանի բաղադրող ամեն մէկ մասը.

4. Ուստի քանի՞ տեսակ անդամազննութիւն կայ.

— . Երեք.

5. Որո՞նք են.

Ա. Ընդհանուր անդամազննութիւն, որ կխօսի ամեն տեսակ անասնոց վրայ: Բ. Բազդատական անդամազննութիւն, որուն նպատակն է միայն մէկ տեսակի մը. Գ. տեսակն է մարդկային անդամազննութիւնը որ կսովրեցնէ մարդուս կազմուածքին չորքը եւ զանի բաղադրող զանազան մասերը: Ինչպէս մորթ, ոսկոր, միս, արիւն, ջիղ, մարմնոյն մէջ պարունակող զանազան անդամները, լինչպէս լեարդ, երիկամունք, աղիք, ստամոքս, սերտ, թոք, եւ.

6. Բնազննութիւնը ի՞նչ կսովրեցնէ:

— . Բնազննութիւն եւ անդամազննութիւն երկու ամենաօգտակար գիտութիւնները մէկզմէկէ անբաժանելի են, որովհետեւ ըսինք թէ անդամազննութիւնը կսովրեցնէ կազմուածքին ամեն մէկ մասը, բայց բնազննութիւնը նոյն մասանց իրարու հետ ունեցած յարաբերութիւնը, այն ամեն անդամոց պաշտօնները: Զոր օրինակ անդամազննութեամբ պիտի սովրինք թէ ի՛նչ են թոքերը, սիրտը, եւ. բայց բնազննութեամբ կը սովրինք թէ ի՛նչ են թոքերուն, սրտին պաշտօնը: Այլ կսովրեցնէ թէ թոքերը երկու սպունգային անդամներ են, կուրծքին ամենաբարձր կողմին մէջ դրուած եւ անոնց բաղադրութեանը մէջ կմտնեն զանազան անհամար ու բարակ երակները ու ջիղերը, եւ. Իսկ բ. ով պիտի սովրինք թէ ընչառութեան միջոցաւ ընդած օդերնիս թոքերուն մէջ կմտնեն եւ հոն արեան դէմ գալով զանի կմաքրեն եւ նոր սնուցիչ յատկութիւն մը կուտայ օդոյն մէջ պարունակեալ թթուածինին մէկ մասն արեան հետ խառնուելով: Անդամազննութեամբ կսովրինք թէ ի՛նչ են ակռաները քանի՛ հատ են, քանի՛ տեսակ են, ե՛րբ կծնին, եւ. Բայց բնազննութեամբ պիտի սովրինք թէ ակռաներուն պաշտօնն է բերնի մէջ մտած կարծր կերակուրները մանրցնել մարսողութիւնը դիւրացնելու համար, եւ.

Կը տեսնես Աբգոյ ընթերցող, թէ ո՛րչափ զուարճալի եւ օգտակար գիտութիւններ են ասոնք: Եւրոպիոյ լուսաւորեալ ազգաց մէջ գործաւորն անգամ գիտէ ասոնց եւ ասոնց նման ամենաօգտակար գիտութեանց նախապիտելիքները: Ամեն ազգաց մէջ ալ զանազան կուսակցութիւնք, վէճ եւ գժտութիւնք անպակաս են, բայց մէկ կողմանէ գիտութիւնք եւ արհեստք կյառաջանան, օգտակար ընկերութեանց թիւերն օր ըստ օրէ կաւելնան. բայց մեր ազգին մէջ միայն կուսակցութիւնք, վէճ, գժտութիւնք եւ անհոգութիւն կտիրապետեն, եւ այն միջոցին ոչ միայն նոր ընկերութեան հիմնարկութիւն կըլլայ, այլ եղածներն ալ դատարկան վիճակ

մը կտանան :

Հայերը, չորրորդ երկու տարբերը կուսակցութեանց մէկ կամ միւսին յաղթութեանը վրայ, նախատած Հայը, քա՜ եղբայրդ է, դուն ես, զարկած ընդդիմադիդ է. մէկդի թողուած կուսակցութեան ոգին, ազգին ոտերիմ ընթացքին, և խոհեմութիւնը մեզ առաջնորդ ունենալով մնացածներ Ազգին վիճակը, որ շատ գէշ է, թշուառ է, աղքատ է : Ապագայ սերունդը մեր վրայ անեծք միայն պիտի կարդան, եթէ մենք մեր այս ազգակործան ընթացքը չփոխենք : Ակն ու միութիւնը թողըլլան մեր սկզբունքը, զի սոսկ են Քրիստոնէութեան հիմը, և սոսկ են միանգամայն մեր Ազգային Սահմանադրութեան ոգին . . . բայց օ՛ր է հասարակութիւնը, որ գիտնալով անոի ծագած ու ծագելիք բարի հետեւութիւնները, ամեն բան խոհեմութեամբ պօրծէ . . . :

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ.

Գիտութեանց կարեւորութիւնը ընթերցողաց աչքի դիւրութեամբ մէկ նետել համար, յարմար կնկատեմ դարձեալ երեւելի հեղինակներուն մէկէն սա հետեւեալ խորհրդածութիւնն յառաջ բերել, զոր ամենայն կերպիւ կարացաւ ան կարեւոր է Գիտութիւնը մարդկային ընկերութեան, և ոչ միայն հարստութեան, այլ և աղքատին, պարծանքին, ամեն տեսակ արհեստի տէր անձանց, դաստիարակաց, եկեղեցականաց ևն : Մէկ խօսքով մարդկութեան կիրքն կրողին պէտք է, զի անով է որ մարդս միւս դաս անասուններէն կատարելի, զի անկէց կախումն ունին մարդուն ազատութիւնը, իշխանութիւնը, ևն :

Գիտցիկ խելացի, բարեսիրտ, վաստկոտն երեւակայութեան տէր, բայց ամենատգետ երիտասարդուհի մը 1854 Թուականին կհարցնէ վերոյիշեալ հեղինակին Թէ, ի՞նչ կիմացուի 1848 Նոյն յեղափոխութիւնը ըսելով, նոյնպէս ազատչին յեղափոխութիւնը ևն : Կզարմանամ երիտասարդ, շարունակ այս բառերն արտասանելով երկարօրէն կխօսին և զանազան դիտողութիւններ կընեն :

Ուստի կաղաչեմ կըսէ Թէ ի՞նչ ըսել է յեղափոխութիւնը . որոյ համար հազարաւոր մարդիկ մեռած են :

Յայտնի է որ Գաղղիոյ մէջ պիւրին է հասկնալ այս մեծ բառը, ինչպես պարզապէս պատահողներն, գործածողը, գիւղացիք և մինչև անգամ կանայք ևս գիտեն այս բառին նշանակութիւնը : Բայց այն սիրուն և միանգամայն տպէտ աղջիկը բոլորովին օտար էր զանի հասկնալու և հետեւաբար իզուր այս բառին վրայ կխօսէի ու կմեհենէի ; անոր համար անիմանալի էր, վասն որոյ բառական գժուարութիւն ունեցայ զանի համոզելու և տալիցնելու յեղափոխութիւն բառածը, որոյ համար փիւրաւորներ արիւն Թափած ու զոհ եղած են ի փառս Հայրենեաց :

Ուստի որոշեցի նախ և առաջ խօսիլ ազատութեան վրայ նիւթոյս սկզբունքն կազմելով, յետոյ հանապազատութեան, արտաշարժ գտնելով : Ահա այս երկու փափուկ առաջարկութիւններն մեր խօսակցութեանց հիմն եղան, և հազիւ Թէ երրորդ առաջարկութիւն մ՚ալ ընել կսկսէի, խեղճին ուրախութիւնը տխրութեան փոխուեցաւ, որն որ նշան է այս տեսակ խօսակցութեանց անվարժ, հասկնալու և զատելու անկարող ըլլալուն : Ուստի հարկադրեցայ ըսել իրեն Թէ չէք հասկնար զիս :

Եւ տեսայ որ լալ սկսեց :

Ուստի խօսակցութեանս նիւթը փոխելով, մեր քովիկը գանուող վարդ,

անուշահոտ ծաղկին վրայ խօսել սկսայ և ըսի իրեն թէ ես եմ զանի հոս տընկածն և մեծցնողն , և որն որ սովրեցուց ինծի թէ այս տեսակ ծաղիկներն արեգակի խիստ տաքութեան չեն կրնար դիմանալ և շատ ջուր կուզեն :

Այսր վրայ աղջիկը ուրախութենէն խնդալ ու ժպտիլ սկսաւ :

Եւ ես քաջալերեալ շարունակեցի մեր առաջին խնդիրը , բայց այս անգամ դիտութիւնը մեկզի թողլով միայն պատմութիւնն յառաջ բերի : Եւ դարձեալ տեսայ այս կերպն ալ անոր անհասկնալի եկաւ դի դեռ չեր գիտեր թէ ի՛նչ կը նշանակէ պատմութիւն բառը :

Ուստի յուսահատեալ ըսի իրեն թէ շատ կարևոր է գիտնալ կնկան մը , մանաւանդ այն տեսակ գիտութիւններն , որոնցմով միայն մարդիկ կարող են երջանկանալ :

Այս խօսքերն աղջկան ուշադրութիւնը գրաւելով , աճապարանօք պատասխանեց թէ , ուրեմն , ինչո՞ւ համար զանազ չես սովրեցներ : Դուք , այսչափ տարիներու մէջ շատ բան սովրեր էք և մինչև այսօր ալ հազարաւոր գրեանք կարդացած էք , իսկ ես և ոչ մէկ գիրք մը , բայց ի մէկ քանի սիրավէպներ , զորոնք քնաւ չեմ սիրեր , և որովհետև անոնցմէ զատ ուրիշ գիրք ալ չունիմ , ըրօրինակ այն ինչ սիրավէպը , զոր շատ անգամ կարդացած եմ ընտիր գրուածք մ' ըլլալուն , ուստի եթէ կուզէք կրնամ զանի ձեզ տալ , կարդալու համար :

Ո՛չ , ըսի , խղճալով , օգտակար և քիչ մ' ալ ուսումնական գրեանք գէնէզ կձանձրացնեն :

Ո՛չ , եթէ ձեր յառաջ բերած առաջարկութեանց վերաբերին , ինչպես յեղափոխութիւն և պատմութիւն , և պիտիք որ առնեմ տեսակ սիրավէպներէ ու կեղծ վիպասանութիւններէ բոլորովին կխորշիմ , վասն որոյ նախապատիւ համարած եմ ասեղնագործել , ծաղիկն խնամել և կամ այծիս հետ խաղալ :

Ուստի կուզէք քիչ մը ուսումնական ծանօթութիւններ սովրիլ :

Այո , անուշակայր , բայց այս կըցաւիմ որ ինծի նման տգէտ աղջիկ մը զգեզ պիտի ձանձրացնէ : Եւ այս ըսելով տխրութեամբ գլուխը ձեռքին վրայ դրաւ :

Ուստի ինչպէս սկսեըլուս վրայ քիչ մը խորհելէն յետոյ , որոշեցի որ առնեն առաջ պէտք է տպաւորել անոր մտաց մէջ երկու մարմնոյ միզմիկու մէջ ունեցած տարբերութեան կէտերը , առեղծուածոյ սիրոյն և իրարու հետ ունեցած հաղորդակցութիւնին : Այսր վրայ սկսայ համառօտ պատմութիւն մը վիպասել , բայց բաւական ժամանակ կորսնցի և դարձեալ ուզածս չըգտայ , որովհետև գանուածներուն առնելու անյարմար էին , բաղմաթիւ սըխալներ պարունակելնուն համար :

Վասն որոյ որոշեցի նախ պատմութիւնը սովրեցնել , և նախապատիւ գըտայ Հռովմայեցւոց համառօտ պատմութիւնը , որ նա ևս որքան որ սիրալ ուծուռ կէտեր կպարունակեր ալ նէ , զանոնք ուզղեցի և բաղմաթիւ օգտակար ծանօթութիւններ աւելցուցի :

Փառք այս աշխատութեանս , ոբով խեղճ աղջիկը կարող եղաւ քան բաւականի սովրիլ այս պատմութիւնը , տեղեկացաւ ու համոզուեցաւ որ Սալլիններուն քնաջինջ ըլլալը շատ աղէկ է եղեր , նոյնպէս Ֆիլվիին շատ չար կին ըլլալն , ևն :

Այսպիսի լաստաւորեալ դարուս մէջ մեծ նախատինք է հօր մը , երբ կնոջը ու զաւակացը գոնէ Ազգային պատմութիւնը չաւանդէ :

Կանայք մանաւանդ , առնենէն սըգետ մանն կկազմեն և մարդկային բնութեան առնեաւօտակար գիտու-

թեանց նախակրթանցն անգամ տգէտ և բոլորովին օտար կմնան, ասով մարդոց ու կանանց մէջ ահռելի տարբերութիւն մը ծնունդ կառնու, և որ աճնաքաղցր և սուրբ կապով միացած երիկ ու կիսկան մէջ ղանազան գժտութեանց սուիթ կուտայ։

Եւ յիրաւի ինչ վատահութիւն, հաւատարմութիւն, սէր և մտերմութիւն կրնայ ունենալ քիչ շատ հմուտ երիտասարդ մը ամենատգէտ աղջկան մը հետ։

Այսօր կանանց մեծագոյն մասին և ընդհանրապէս խօսելով բոլորին տգէտ մնալնուն պատճառ իրենք են արդեօք, անտարակոյս, ո՛չ, վասն զի գիտութիւնը մինչև այսօր ամենատարական վիճակին մէջ մնացած է, մանաւանդ մարդկութեան վերաբերեալ գիտութիւնները, որոնք կարծես թէ մի և նոյն ուսումնականաց կվերաբերին և յիրաւի միայն անոնք ճաշակը գիտեն ու օգտակար հետևութիւններ կհանեն։

Ճա՞շտ գործածուրք* ։—

Որոնց համար քաւական համառուած են միայն քիմիական, բնական գիտութեան և Թուաբանական գիտութեանց սկզբունքները և այն ալ իրենց գործարաններուն համար։ Բայց պատմութեան գալով ինչպէս տղայք և կանայք, բոլորովին հեռու կկենան անօգուտ քան համարելով։

Բայց պէտք է որ կանայք ևս մարդոց ուսումնականութեան, արուեստագիտութեան, ճարտարութեան հետ ընկերանան։ Պէտք է նաև ի վառս և յերջանկութիւն մարդկութեան, իգական սեռին մտաւորական հրաշալի և ամենանուրբ զգայականերն չարժման մէջ դնել, որոնց արգելք եղած է մինչև այսօր ոչ այլ ինչ պատճառ, բայց միայն անձնասիրութիւնն ու խարդախութիւն։

Եւ ինչո՞ւ համար ինծի անք մեզ հետ գիտութեանց մինչև խորը կթափանցեն, զի անոնք ևս հանճարեղ, հնարագէտ, կանոնապահ են և մենք աւելի յիշողութիւն ունին և որովհետև մենք վերծանող շատ կէտեր շուտով կգտնեն, ըսելէ թէ մենք աւելի աղեկ հետևութիւններ յառաջ կբերեն։ Եւ ինչո՞ւ համար աշխատասէրն, գործասէրն ու մշակին աշխատութեան գերի եղածին չափ գիտութեանց ալ չըլլայ։

Ով կարող է հաշուել որ մարդիկ մեծ օգուտ կրնան դաղել իր նախնեաց ըրածներն քննելով, ո՞վ կրնայ մտքէ անցնել և երևակայել ճանփուն վրայ անցնելիքին փողոցներուն մէջ գըտնուած որ և իցէ քար մը կոտրողներուն ըրած կորստեան հաշիւը, չգիտնալով որ այն ինչ անսիտան կարծուած քարին կտորը, ուռնին տակը գործածելով օդտակար կըլլայ իր տեսակին մէջ։ Եւ արդեօք ի՞նչ դժուարութիւն կայ անոնց սովրեցնել այսպիսի խնամք և ուշադրութիւն։ Այս տեսակ նիւթոց վերաբերեալ մէկ դաս միայն կբաւէն։ Ի՞նչ մեծ կորուստ կրնէն ամեն օր գիւղերու մէջ տղոց գիտութեանց ընդհանուր նախակրթութիւններն միայն չըսովրեցնուն։

Եթէ պիշեր տեսն Գիւղացին մը երկու ձեռուընեն ետին դրած կատղատի, կարծես թէ օդն ու աչքին զարնող ամեն բան կդիտէ, բայց առանց պէտք եղածն դիտելու, քննելու, անօգուտ տեղն աչքերն կհոդնեցնէ, ու չգիտեր թէ ի՞նչ են իր շուրջը գտնուածները....։ Ուստի պէտք որ Գիւղացիք ևս սովրին ինչ որ օգտակար և կարևոր է որով ճա-

---

* Երանի թէ մեր գործաւորներն ալ այնչափ գիտնային, շատերն դեռ իրենց մայրենի լեզուն չգիտնալէն զատ այլեն անգամ անոնց համար հրեշ մըն է։

չակնին աւելնայ և աւելի հետապրպիր ըլլան ։

Բայց ամենէն առաջ պէտք է սովրիլ թէ ինչ է գիտութիւն ըսուածը ։

Լիքսէնպուրկի լեռանց մէջ նստած ուր գտնուած ապառաժներուն ամէն մէկ շարքը երկրագնտիս նախնի դարուց պատմութեան մեծ հատորն կկազմեն , ինչ կարևոր և խորհրդածութեանն արժէ կգտնէի , ելևէջայելուզոր անթիւ գաղտնիքներ , անթիւ անծանօթ միացած հարստութիւնք , գիտութեան վերաբերեալ այնչափ ծանօթութիւնք ան նոց մէջ թաղուած միացած են , և որ կսէի այն ժամանակը հառաչելով մը թէ քաղում ինչ անկորուստ միացած են աշխարհիս մէջ ։ կգիտէի քարերուն դէմ բախող յեղեղին ամէհի ալիքները , ոտերուն զարնող հովերուն ձայնը մոխիկ կընէի ու կըսէի ինքնիրեմս թէ ո՛րչափ վայրենի զօրութիւնք կորսուած են աշխարհիս մէջ . . . ։ կտեսնէի միւս կողմէն երիտասարդ կիներ խոտերու կոյտերու ծանրութեան տակ ընկճուած , որոնք կանցնէին քովէս , տխուր , լուռ , թշուառ ու քրտնած , զորոնք կին կոչելու համար միայն դէմքերնին կը միացած , կըսէի թէ սա կուրծքին մէջ սիրտ մը կայ որ նոր կարելի է սիրուն և ջնարհալից և ձայն մը կալուելի է թէ գեղեցիկ և գեղգեղուն ըլլայ . օ՛հ , ոչչափ սեր և աղնուութիւն ի կորուստ են մարդկութեան մէջ ։

Կտեսնէի , որ պիւղայեն , իր ծանր քահին տակ ընկճուած գլուխ պիտի հանելու համար , կիմոզեր աշխատութիւնը , որ մինչ ցին և ձեռքն ճակտին վրայէն կանցնէր քրտինքը սրբելու ։ Օրհնեալ քրտինք , քեզ , կպարտաւորիմ կերած հացս ։

Ոոյ համար կըսէի թէ ոյս մարդը , որ իմ ընկերս , նմանս է , կարելի է որ հանճարի տէր , և հարստութեան յարմար ըլլար ։ Ա՛հա հարստութիւն և գաղտնիք , ամենայն ինչ ի կորուստ են ։

Բայց սա կայ որ այն լերանց մէջ անծանօթ հարստութիւնները , հովին տակը թաղուած գաղտնիքները կսբերլի և որ ապագային երևան ելլեն , բայց այն խեղճ մարդը , թշուառը , տժկտը պիտի մեռնի իրեն հետ տանելով բոլոր հանճարները , ուստի վերջին հառաչանքով մը խօսքիս վախճան տուի ըսելով թէ որչափ զօրութիւնք են ի կորուստ մարդկութեան մէջ ։

Շարունակելի ։

ԾՆՈՂՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՑ ԵՒ ՏՍՉՈՏԵՍՒՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Այս երկու նորահաստատ ընկերութեանց հիմնարկութիւնը յայտնի է Ազգային կծանուցանեմք և կյորդորեմք մեր սիրելի Ազգայիններուը որ այսպիսի ազգօգուտ ընկերութեանց յառաջդիմութեանը համար քարեհաճին ազգասիրաբար պէտք եղած ձեռնտուութիւնն ընել ։

Այս երկու ընկերութեանց հիմնադրականն կանոնները , հանդերձ մեր պիտոյութեամբը հրատարակելէն ուրիշ անգամի կծանուք , հրատարակած մեր խորին շնորհակալութիւնը յայտնելով նոցա հիմնադրոյ ։